Արձանագրություն N 6

Առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ վերակառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ԲՄԱՇՁԲ-2021/3» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան	«28» «հունիսի» 2021թ. ժամը 15:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ	Գևորգ Սիմոնյան (Բացակա)
Հանձնաժողովի անդամներ	Կարեն Խաչատրյան, Սմբատ Սմբատյան, Հարություն Վարդանյան, Արամ Գրիգորյան (Բացակա)
Հանձնաժողովի քարտուղար	Միհրան Համբարձումյան

1. Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի մասին

(Կ. Խաչատրյան)

Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են որոշակի անհամապատասխանություններ՝ մասնավորապես.

Արտ Պլաս ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթում նշված ընդամենը գումարը չի համապատասխանում գնային առաջարկի «Ընդհանուր գին» սյունյակում ներակայցված գումարին:

Մասնակցի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում առկա չեն առաջարկվող սարքերի և սարքավորումների մոդելների մասին տեղեկատվությունը:

Սիսիանի (Նոր Բակ) Նորոգշին ԲԲԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթի 1213-րդ տողում միավորի ընդհանուր արժեք և քանակ սյունյակներում նշված թվերի արտադրյալը հավասար չէ ընդհանուր արժեք սյունյակում նշված թվին:

Մասնակցի կողմից ներկայացված Հավելված 1.1-ում առկա են ներքոնշյալ անհամապատասխանությունները.

14-րդ կետ պահանջը եղել է FHD, ներկայացվել է ոչ FHD,

15-րդ կետ պահանջը եղել է FHD, ներկայացվել է ոչ FHD,

16-րդ կետ պահանջվել է ոչ պակաս 40մ3 արտադրողականությամբ օդի կոմպրեսոր, ներկայացվել է՝ 37,80մ3: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ օդի կոմպրեսորից մղվող օդը նախատեսված է պացիենտի շնչառության համար, անհրաժեշտ է տեղադրել ոչ յուղային օդի կոմպրեսոր,

18-րդ և 19-րդ կետորով նախատեսված վերելակների չափսերը և բեռնատարողությունները չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին,

27-րդ կետով պահանջ է եղել կուտակման բաք 1000լ, ներկայացվել է 500լ,

35-րդ կետով պահանջ է եղել ՖՎՎ420 Վտ, ներկայացվել է ՖՎՎ335 Վտ,

36-րդ կետով պահանջ է եղել ցանցային կերպափոխիչ 30 կՎտ, ներկայացվել է ցանցային կերպափոխիչ 12,50 կՎտ:

Մասնակցի կողմից ներկայացված Հավելված 1.2-ում լրացված չէ օգտագործվելիք նյութերի մասին տեղեկատվությունը **(տվյալ հավելվածը պարտադիր չէ, մասնակիցը կարող է հրաժարվել այն ներկայացնելուց):**

Ն.Ռ.Վ.Ա.Դ. ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ը լրացված չէ:

Տ-ՔՆՍԹՐԱՔՇՆ ՓԲԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ը և Հավելված 1.2-ը լրացված չեն **(Հավելված 1.2-ը պարտադիր չէ և մասնակիցը կարող է հրաժարվել այն ներկայացնելուց)**:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով «ՀՀ ԱՆ ԲՄԱՇՁԲ-2021/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.9 կետը՝ մասնակիցներին առաջարկվում է **ծանուցման պահից մեկ աշխատանքային օրվա ընթացքում** շտկել վերոնշյալ թերությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Կ. Խաչատրյան)

«ՀՀ ԱՆ ԲՄԱՇՁԲ-2021/3» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստ հրավիրել 2021թ. հուլիսի 06-ին ժամը 15:00-ին, ք. Երևան, Կատավարության տուն 3 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահող	_____	Կարեն Խաչատրյան
Հանձնաժողովի անդամներ	_____	Սմբատ Սմբատյան
	_____	Հարություն Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար	_____	Միհրան Համբարձումյան